

նայ) մը սպիտակ շուրջառով մը, որուն թէ՛ կուրծքին եւ թէ՛ կոնակին ծայրը ազուցեալ կար դաւադան մը: Ասոնցմէ զատ զանազան ուրիշ հայրեր, մանկիկին առջեւէն մինչեւ տուն բոլոր ճամբան երգելով, դացին: Երբ մենք հոն հասանք, ճաշ պատրաստուած էր: Քաղաքավարօրէն հրաւիրուեցանք ճաշի նստիլ եւ այսպէս նստանք՝ մեծ պատրիարքը հայրերուն հետ մէկ կողմը, խիկ միւս կողմը նստած էր Հայ Իշխանը, եւ իրեն քով: Իրարու կենաց բաւական կոնծելով անցուցինք, եւ նոյնիսկ ան իր ձեռքով ինծի համար միւս կտրեց: Այսպէս, շատ զինի խմելով տօնակատարելէ վերջ, մենք հրաժեշտ առինք եւ տուն դարձանք:

«Սեպտեմբեր 27, Սարփրազ պէկ եւ Հայ Պատրիարքը եւ Անդլիական դործակատարը Տաթթըր Կօխի (Դեսպանութեան) կողմէ հիւրասիրուեցան: Այս երեկոն, երբ Սարփրազ պէկ հրաժեշտ կ'առնէր Տաթթըրէն, ան հրաւիրեց զայն, զիս եւ իմ ընկերներուս մնացեալները յաջորդ առաւօտ իրեն այցելելու:

«Սեպտեմբեր 28-ի օրը կիրակի ըլլալով... մենք Զուղայ դացինք Սարփրազ պէկին մօտ, ուր զինքը գտանք իր ընկերներուն հետ եւ դուան՝ բազմաթիւ ձիեր: Մենք հոն յարգանքով հիւրասիրուեցանք: Շիշ մը օղի բերել տուաւ, նախ քան ձի նստելնիս, մենք անկէ բաւական խմեցինք: Որով՝ ինքը եւ բոլոր խումբը ձի նստաւ, եւ իր տունէն երեք մղոն հեռու ձիավարեցինք դետին եղերքն ի վեր, որ Սպահանը, կը ջրէ եւ Զինտարուտ կը կոչուի: Այնպէս որ, երեք յիշեալ մղոնները ձիավարելէ վերջ, մենք հասանք, ուր որ Հայ Իշխանին վրանները զարնուած էին: Հոն կար առատ զինի եւ լաւ ուրախութիւն, մեր հիւրընկալութեան համար հայթայթուած: Այնտեղ ամբողջ օրը անցուցինք խմելով, ուտելով եւ նայելով իր ձկնորսներուն, որոնք ուռկաններով ձուկ կը բռնէին եւ ինչ արագութեամբ որ կը բռնէին, նոյն արագութեամբ ալ խոհարարները կը մաքրէին ու կը պտարաստէին եւ մենք կ'ուտէինք: Այստեղ օրուան կիսուն Մր. Պրըդ, Անդլիական Գործակատարը եւ Մր. Կիպսընը, ուրիշ Անդլիացի վաճառական մը մեզի եկան, եւ այդպէս ամբողջ օրը մեծ զուարճութեան մէջ ան-

ցուցինք: Գիշերը հասաւ, վրանները վար առնուեցան եւ մենք ձի նստանք, եւ ճանապարհին դէպի մեր բնակարանը շատ խաղեր խաղցանք»: (44)

Ուրիշ օտար ուղեգիր մը, Ատամ Օլաբիուս, սապէս կը զրէ իր օրագրութեան մէջ Սպահան իր այցելութեան առթիւ, 1637 Սեպտեմբերին. — «Սարփրազ պէկ, Հայոց կառավարիչը, ընկերացած իր երկու եղբայրներուն*), եկաւ դեսպանը տեսնելու, նպատակ ունենալով ծանօթանալ եւ ընկերական յարաբերութիւն հաստատել անոնց հետ: Անոնք երեքն ալ առաջնակարգ նկարագրով անձեր էին, ազատ իրենց խօսակցութեան մէջ, եւ քաղաքավար, որոնք այնքան համարումը չահեցան դեսպան Պրուլմանին, որ այդ կարգի մարդիկը կը սիրէր, եւ ինքն ալ էր ազատ բնաւորութեամբ մարդ մը, որ ան անոնց երկու երէցներուն ընծայեց իւրաքանչիւրին ընտիր հրացան մը որսի, եւ կրտսերին տուի մը ատրճանակներ: Անոնք այս նուէրները այնքան աղնուութեամբ ընդունեցին, որ իրենց շնորհապարտութիւնը ցոյց տալու համար որոշեցին ընդունելութիւն մը սարքել դեսպաններուն: Ատոր համար անոնք նշանակեցին Սեպտեմբեր 18-ը, եւ խնդրեցին, որ իրենց հետ բերեն (դեսպանական) բոլոր հետեւորդները: Մեզի զրկեցին ձիեր մեզ բերելու համար, եւ հայ վաճառականներէն ոմանք՝ մեզի ընկերակցելու համար:

«Մենք մեզի հետ տարինք երկու փորթուկացի վանականներ, Օգոստինականներու մեծաւորը, եւ մեր հասարակ թարգմանիչը: Սարփրազ պէկ դեսպանները ընդունեց եկեղեցւոյն մուտքին առջեւ, Զուղայ կոչուած արուարձանին մէջ, ուր ան պատարագ ընել տուաւ տեղւոյն պատրիարքին, որ իր վրայ ունէր արծաթաթիւ դիպակէ շուրջառ մը, ոսկիէ ծաղիկներով նկարակերտ, ընդելուզեալ խոշոր մարգարիտներով եւ խոյր մը նոյն նիւթէն շինուած, ամբողջութեամբ ծածկուած կը-

(44) The Journal of Robert Stodart, London, 1935, p. 71-73:

*) Էլիազ Բէկ եւ Վաթան: